ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1965 Общественные науки

Վ. Հ. Բդոյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂՈՒՐԱԳՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բրիչային հողագործությունը Հայաստանում սկիզբ է առել դեռևս հին քարեդարում, երբ հավաքչությունն ու որսորդությունը մարդու ապրուստի միակ պայմանն էին։

Շենգավիթում պեղված ցորենի տեսակները, հացի մի շարք հորերը, կացնաձև-մուրճաձև բրիչները, աղորիքներն և այլն լիովին հաստատում են, որ Հայաստանում էնեոլիթյան և նեոլիթյան շրջանում բրիչային հողագործությունը բավական զարգացած է եղել։ Այն ժամանակներում արորը տակավին գոյություն չուներ։ Կինը հողը մշակում էր միայն փայտե և քարե բրիչներով։

Բրոնզի և երկաթի շրջանում բրիչներն առավել բազմազան դարձան։ Նոր մետաղներն իրենց առավելություններով մեծապես նպաստեցին, որ հողագործության մեջ հեղաշրջում կատարվեր։ Ահա այս շրջանում Հայաստանին հայտնի էին ձեռքի ճնշմամբ, ոտնահարվածով և ձեռնահարվածով գործող բազմատեսակ բրիչներ (փայտե բրիչներ, մետաղածայր-նիզակաձև բրիչներ, թիակներ, բանջարքաղիկներ, նախաբահեր, բահեր, փորող երկժանիներ, քլունգներ և այլն)։ Դրանց մեջ ուրույն տեղ ունեն հողուրագները։ Սակայն, հակառակ Վրաստանի, Հայաստանում բրոնզե հողուրագները հազվագյուտ են։ Ըստ երևույթին այն պատճառով, որ քլունգները դրանց դերն են կատարել։ Այստեղ հնից իրարից խիստ տարբեր մի քանի բրոնզե և երկաթե պեղածո բրիչներ մենք հակված ենք հողուրագ համարել։ Այսպես, օրինակ, Շիրակում գտնված է բրոնզե մի գործիք (տախ. I—3), որը Հ. Մարտիրոսյանն ուրագ է անվանել[1]։ Գործիքը հաստահեղ է, շեղբը՝ կիսալուսնաձև սայրով։ Թակի փոխարեն ունի շեղասայր կացնակ, որը հարմար է փորելիս թփարմատներ ու ծառարմատներ կտրելու համար։ Այն լիովին պիտանի կլիներ անտառահատական հողագործության մեջ։

Կարմիր բլուրում պեղված այն երկաթե գործիքը, որի շեղբը նման է ուրագի և կոթառի փոխարեն։ Ելուստ ունի (տախ. I—1ա) Բ. Բ. Պիոտրովսկին անվանում է ուրագաձև գործիք[2] կամ ուրագ[3]։

Մեր համոզմամբ դա հողուրագի ձևերից մեկն է եղել։ Այդ երևում է նրանից, որ ուրագը խիստ հաստ ու ծանր է, որով նա համեմատվում է մինչև XX դարի սկիզբը պահպանված փետատ հորջորջվող հողուրագների հետ (տախ. II—2)։ Այդպիսին է նաև Գառնիում պեղված երկաթե հողուրագը (տախ. II—1)։

Կարմիր բլուրի այս հողուրագը հնարավոր էր կոթավորել երկու ձևով։ Ամենահարմար ձևն այն է, երբ դրա կոթունը կմտներ փայտե կոթի հաստ ու կեռ ծայրի մեջ (տախ. I—1բ)։ Երկրորդ ձևը դեռևս 1880-ական թվականներին առաջարկել է Ժակ դը Մորգանը՝ նկատի ունենալով կացնի նեգրական

[1] А. А. Мартиросян, О древнем поселении около Ленинакана, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, № 10, էջ 89, 90, նկ. 4։

[2] Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, стр. 39, 40, рис. 20.

[3] Кармир-блур, II, стр. 36

կապելաձևերը կապիչներով։ Ուրագի կոթունը փայտե կոթի կեռին կապելու այդ եղանակը (տախ. II—2) նույնպես հարմար է։ Սա կարելի է համեմատել Կարնո նահանգին հայտնի այս ոտնուրագի հետ, որը մինչև այսօր էլ երկաթե կապիչով է միանում փայտե կոթի հաստ ծայրին (տախ. I—4)։



Տախ. I

Հայաստանում իսկական հողուրագի օրինակ է ծառայում Գառնիում պեղված երկաթե ուրագաձև գործիքը (տախ. II—1)։ Այն պեղող Բ. Առաքելյանը, վերագրել է VIII—IX դարերին և անվանել է ուրագ[5]։ Մեր կարծիքով դա հողուրագ է այն պատճառով, որ խիստ հաստ է ու ծանր[6], շեղբը կոր է (և ոչ թե թեք և ուղիղ, որ հատուկ է ձեռնուրագին)։ Գառնիի այս հողուրագը համեմատելի է Արծկեի Բարկատ գյուղի փետատ կոչվող հողուրագի հետ (տախ. II—2)[7]։

---

[4] J. de Morgan, Mission scientifique au Caucase. Paris. 1889, էջ 134, նկ. 127—129։ Հմմտ. նաև Խնամկիի դամբարանի նույնանման գործիքների կապելու ձևերն ըստ Էմիրի, որ առաջ է բերել Գորդոն Չայլդը (տե՛ս Гордон Чайлд. Древнейший Восток в свете новых раскопках. Москва, 1956, стр. 146, рис. 46)

[5] Բարկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1958, էջ 138 և տախտակ X.

[6] Ուրագի թակի հաստությունը 3 սմ է, կոթունը՝ 2 սմ, բերանից քիչ վերև՝ 8 մմ (չափերը տե՛ս տախ. II—1)։

[7] Հինգերորդ դարում գործածվել է մարկեղ բառը՝ «բրիչ, փայտատ» նշանակությամբ (ՀԱ, 1897, էջ 246)։ Հր. Աճառյանի վկայությամբ գավառական մարգեղ բառը նշանակում է «ամանը-մանը փորել բանջարեղենի սերմը սերմանելու և հողի տակ անցկացնելու համար, սերմը հողով ծածկել» (Արմ. բառ., Դ. 920)։

Այս վկայությունները ցույց են տալիս, որ մենք ոչ թե փայտատի, այլ հողուրագի հետ գործ ունենք (ժողովուրդը փետատ ասելով միշտ հասկացել է հողուրագ, քյունգ)։ Հայտնի է, որ փայտատը (որպես փայտ կտրող գործիք) միայն կարճ կոթ է ունենում։ Այստեղ, սակայն ձողով և երկարակոթ մարգեղով մաքրելու մասին ակնարկը լիովին համապատասխանում է երկու բրիչի, մեկը փայտե ձողն է, որով իրոք մարգերի թեթևակի փխրեցում ու քաղհան է արվում և մյուսը երկաթե երկարակոթ հողուրագն է, որով այսօր էլ հող են մշակում։ Գործիքի այս դերը առավելապես հաստատում է մարգեղը։

Հնագույն հողուրագների վերաբերյալ տվյալները առայժմ սրանք են։ Հուսալով, որ հնագիտությունը հետագայում պիտի վկայի ավելի անկասկածելի հողուրագների մասին, անդրադառնանք XIX դարից ժառանգություն մնացած այդ գործիքներին։

Վերհիշենք, որ այդ նյութերը, բացի թանգարանային ֆոնդերից, մենք ձեռք ենք բերել այժմ ապրող ավագ սերնդի ներկայացուցիչներից։ Դրի առնելիս աշխատել ենք ընդգրկել ազգագրական շատ շրջաններ, թեև տակավին կան այնպիսի վայրեր էլ, որոնցից ոչինչ չունենք։

Ըստ առկա տվյալների Հայաստանի հողուրագները կարելի է բաժանել մի քանի խմբերի։ Այդ խմբերը կքննվեն, որքան կարելի է, կառուցվածքների վերաբերյալ հարցերի ընդգրկումով։



Ուրագաձև հողուրագներ (վիճակագրությունը տե՛ս էջ 16)։

Առաջին խումբ։ Այստեղ ընդգրկված հողուրագներն ունեն ձեռնուրագի ձևեր (տախ. II)։

Ինչպես ուրագ և հողուրագ ձևերն են ցույց տալիս, ձեռնուրագն ու հողուրագը նախնական շրջանում միևնույն գործիքն են եղել։ Գործիքի այս երկփեղկման, երկու ֆունկցիաներ ստանալու մասին մենք պատմական վկայություններ չունենք։ Փաստական նյութերը, սակայն, այս երկուսի տարբերիչ գծերը պարզ ցույց են տալիս։ Տաշող ուրագները նեղ են և կարճ, իսկ փորողները լայն ու երկար։ Բայց կան և շեղբի չափերի համընկնումներ։ Փոքրահասակների և կանանց համար կամ թերևս ֆունկցիոնալ տեսակետից, սակավ աշխատանք պահանջող տեղերի համար պատրաստված հողուրագները փոքր են. նույնիսկ երբեմն ձեռնուրագից էլ փոքր, իսկ տղամարդու կամ՝ ծավալուն աշխատանք պահանջող տեղերի համար դրանք մեծ են։ Առաջին դեպքում դրանք համապատասխանում են ձեռնուրագին, երկրորդ դեպքում՝ ոտնուրագին։ Նայած հողա-

Ուրագաձև հողուրագների վիճակագրություններ

Անվանումը	Չափերը					Դիրքը	Պատարողը	Վայրը	Աղբյուրը
	Նև.	ընդ. երկ.	բեր. լայն.	կոթի երկ.	անցքի ձևը				
Հողուրագ	1	16	7,5	—		հող փորել	տղաս արդ	Գառնի	ՊՊԹ, 2098 2
Փետատ	2	20	8	100		»	»	Իարկաա	ՊՊԹ, 7270
Պախեղի ուրագ	4	21	18	—		քաղհան, փխրեցում	տղաս., կին	Արտաշատ	Զեռագիր
Թաքուջակ	4	—	—	—		»	»	Նանինց	Զեռագիր
Զաքուճակ	4	17	13	—		»	»	Բանոն	Զեռագիր
Բոստանի փալ	4	21,5	185	125		»	»	Նովրուզլու	ՊՊԹ, 5389
Քաղհանի ուրագ	4	—	—	100		բուկլից անել	կին	Ալափարս	Զեռագիր
Քախանի ուրագ	4	17	12	—		քաղհան և բուկ.	»	Տափավան	Զեռագիր
Ավեր ուրագ	4	—	—	100		փուշ կտրել են	տղամարդ	Ալյուր	Զեռագիր
Կաղմա	4	25	10	—		հող փորել	կին	Ալյուր	Զեռագիր
Զափա	4	30	—	—		քաղհան անել, քար շարել են	տղաս արդ	Նոր մեծ գյուղ	Զեռագիր
Զեռաց չափա	4	—	—	—		բուկլից անել	տղաս արդ	Նոր մեծ գյուղ	Զեռագիր
Թակուջակ	4	—	—	—		քաղհանել են	կին	Արար. Խոյ, Սուրմ.	ԲԲ, 203
Տագանիչք	4	—	—	—		»	»	Վան	ԲԲ, 203
Քաղհանի ուրագ	5	16	9,5	70		քաղհանել, փշրել	»	Արտաշատ	ՊՊԹ, 5391
Կանաչի ուրագ	5	10	6	50		քաղհանել են	»	Արտաշատ	Զեռագիր
Ուրագ	5	—	—	—		»	»	Էղեձոր	Զեռագիր
Քուլպա	5	—	—	—		բամբակ քաղհանել, ոռոգել են	»	Բալու.	Բալու, 560
Կազգիզ	6	17	7,5	75		հող փոր., քաղ.	տղաս արդ	Մասուն	ՊՊԹ, 5982
Քաղհանի ուրագ	8	15,5	10	80		»	կին	Արծկե	ՊՊԹ, 7289
Զապպա	5	15	12	—		փխրեցնել, քաղ.	»	Արծվանիկ	Զեռագիր
Քրդընհարի	3	—	—	80		քաղհան, փխրեց.	»	Մեղրի	Զեռագիր
Հորեք	2	18,2	10	—		փորել, քաղհանել	կին, տղամ.	Շուշի գյուղ	Զեռագիր

յին պայմաններին, որոնք իրենց հերթին ունեն բարակ ու թեթև ի հաստ ու ծանր տեսակներ։

Ուրադաձև բրիչները տարածված են՝ Արարատյան հովտում, Վանա լճի ավազանում, Պարսկահայքում, Մոկսում, Զանգեզուրում, Գուգարքում, Գեղարքունիքում, Սասունում և այլուր (տե՛ս տախ. II—2, 3, 4, 5, 6)։ Այս վայրերում թեև հողուրագները զգալիորեն օտար բառերով են կոչվում, բայց կան նաև աղգային-տերիտորիալ լեզուների տերմիններով կոչվողներ։ Այսպես, օրինակ՝ ուրագ. մաղեանի (մախանի) ուրագ. պալեզի ուրագ, ավեր ուրագ, հողի ուրագ, կանաչի ուրագ, մաղաճիշ, կաղոիզ. փեսատ, մուլպս, մակալ, բոստանի փալ։

Հայկական հողուրագները օտար բառերով են արտահայտված Պարսկաստանում, Թուրքիայում և այլուր։ Այդ բառերն են՝ թակուչակ-թամուչակ-շամուճակ, շափա (չապպա), կազմա-պազմա։

Ուրադաձև հողուրագների թեթև տեսակներն ունեն կարճ կոթ, որ 65—75 սմ է հասնում, որով կանանց աշխատանքը կռացած է կատարվում։ Իսկ մեծաթաթ ուրադների կոթերը երկար են և հասնում են մինչև 120 սմ, որով տղամարդիկ գրեթե ուղիղ կանգնած են աշխատում։



Տախ. III

Ճկված և կցորդված հողուրագներ (վիճակագրությունը տե՛ս էջ 18)։

Երկրորդ խումբ։ Ծալվող հողուրագներ, որոնց կոթաոր կազմելով շեղբի շարունակությունը, 90° թեքվում է և կոթավորվում (տախ. III—6, 7)։ Սրանց նման է կցորդմամբ կոթաո ձևացրած, բայց ձևով մի այլ հողուրագ (տախ. III—4)։

Սրանք տարածված են Դիլիջան-Իջևան-Շամշադին գոտում և Շիրակում։ Շիրակի Ոսկեհասկ գյուղի մշեցիների վկայությամբ այսպիսիները խորթ չէին նաև Մշո գյուղերին։

Իջևան—Շամշադինի հողուրագը (տախ. III—6) բավական զգալի զոգավոր է. հակառակ որի Շիրակի հողուրագները ոչ միայն այդպես չեն, այլև դրանցից

Ձկված և կցորդված հողուրագների վիճակագրությունը

Անվանումը	Չափերը					Տիպը	Կատարողը	Վայրը	Աղբյուրը
	Նկ.	Ընդ. երկ.	Բեր. լայն.	Կոթի երկ.	Անցքի ձևը				
Ուրագ	1	163	23	180		հող փորել են	կին	Իջևան	ՊՊԹ, 6206
Ուրագ	2	18	16	63		»	»	Նովրուզլու	ՊՊԹ, 5390
Ուրագ	3	19	155	—		»	»	Իջևան	ՊՊԹ, 6207
Զափա	2	17	—	—		քաղհան, բուկլից	կին, տղամ.	Կարծախ	Զեռագիր
Զափա	3	13	—	—		»	»	Կարծախ	Զեռագիր
Թոխի	3	—	—	—		»	»	Ղազվազալ	Զեռագիր
Ղազմա-Թոխա	6	15	14	120		»	կին	Իջևան	Զեռագիր
Կալտաշի-Թոխա	4	—	20	120		կալ տաշել, բուկլից	»	Իջևան	Զեռագիր
Զափա	7	15,5	165	—		ճակնդեղի քաղհան, բուկլից, փխրնց.	կին	Ոսկեհասկ	Զեռագիր
Գայլարի	6	16	10	—		քաղհան են	»	Ոսկեհասկ	Զեռագիր
Օտքի մակալ	5	20	—	120		բանջ. և լոստան քաղհանել	տղամարդ	Ռինարիգում	Զեռագիր
Զեռքի մակալ	5	10	—	25		սոխ ու շաղգամ քաղհանել	»	Ռինարիգում	Զեռագիր
(Հողուրագ)	8	13	8	80		քաղհանել, փխրեց.	կին	Մեղրի	Զեռագիր
Ուրագ	6	13,5	10	80		»	»	Սիսիան	Զեռագիր
(Հողուրագ)	6	15	6,5	75		»	»	Զանգեզուր	Զեռագիր

երկուսը փափկացրած հողը տեղից չհեռացնելու համար կենտրոնում ծակ ունեն (տախ. III—4, 7)։

Ծալվող հողուրագներն իրենց թույլ կառուցվածքի պատճառով վթարման ենթակա գործիքներ են, որի պատճառով հաճախակի նորոգման են ենթարկվում։ Իսկ վերջինս կերպարանափոխում է ուրադի կոթառը։

Երրորդ խումբ։ Ծալվող հողուրագներ, որոնք սեփական կոթառ չունեն։ Դրանց շեղբի շարունակությունը կազմող սուր ծայրը մտնում է փայտե կոթի մեջ ու ամրացվում օղակով (տախ. III—5)։ Ի տարբերություն բոլոր հողուրագների, սա սրվում է երեք կողմից, որով ավելի ռացիոնալ է դառնում քաղհանի աշխատանքը։



Տախ. IV
Ճանկավոր հողուրագներ (վիճակագրությունը տե՛ս էջ 20)։

Չորրորդ խումբ։ Կցորդվող հողուրագներ, որոնք առավելապես նման են ուրագաձև հողուրագներին (տախ. III—1, 2, 3, 4)։ Դժվար է ասել արդյոք մի՞շտ է, որ կցորդմամբ այսպիսի հողուրագների ստեղծումը մետաղի խնայողության հետևանք է եղել։

Հինգերորդ խումբ։ Ճանկավոր-երկբերան հողուրագներ։ Ճանկ կոչված 1—2 սուր մատները (տախ. IV) ծառայում են կանաչիների մարգերը փափկացնելուն, իսկ լայն շեղբերը՝ բուկլիցին և հողի մասնակի տեղաշարժին։ Որոշ վայրերում սրանք պարզապես սոխի ուրագ են կոչվում այն պատճառով, որ լոկ սոխի մարգերին են ծառայում։

Չի կարելի ասել, թե այս խմբերի բաժանումը դրանց համար առանձին ու հատուկ միջավայր կամ արեալ է ենթադրում։ Դրանց զգալի մասը մենք տեսնում ենք միևնույն տեղում, այլ գործիքների հետ միաժամանակ, որի բուն պատճառները երկուսն են։ Առաջինը տվյալ վայրի հողակլիմայական պայմանն է, որտեղ գործիքն ընդունում է այս կամ այն ձևը՝ հարմարվելով աշխատանքի պայմաններին։ Երկրորդը տվյալ ազգագրական շրջանի հնագույն սովորությունն է։

XIX դ. սկզբներից սկսած մինչև XX դ. առաջին քառորդը հայ ժողովրդի կյանքում եղել է տագնապների, զանգվածային տեղաշարժերի ու գաղթերի

Ճանկավոր հողուրագների վիճակագրությունը

Անվանումը	Չափերը					Դերը	Կառարողը	Վայրը	Աղբյուրը
	Նկ.	ընդ. երկ.	բեր. լայն.	կոթի երկ.	անցքի չափ				
Հողուրագ	1					բանջարանոցային փխրեց. քաղհան	տղամարդ	Այնքալ	ԼԳԹ, 123
Սոխի ուրագ	1	17	5			քաղհանել ևն	կին	Ջաջուռ, կամ.	Զեռագիր
Դուլունդ	2					լուկլից անել ևն	տղամարդ	Առափի	Զեռագիր
Քուլունդ	4					»	»	Առափի	Զեռագիր
Զանգալ ուրագ	3	17	6.5	62		կանաչի քաղ. ևն	կին	Վեղի և այլուր	ՊՊԹ, 5393

հարյուրամյակ։ Այդ ժամանակամիջոցում իրար էին միանում երբեմնի ազգակրական տարբեր շրջանների բնակիչներ, որոնք իրենց գործիքաշինությամբ տարբեր մեթոդներ ու ձևեր ունեին։ Այդ շրջանում տվյալ բնակավայրն եկողը դժվարությամբ էր ընդունում տեղական գործիքները, ուստի և զուգադրում էր իրենը՝ իր երկաթագործների ու ատաղձագործների միջոցով։ Երևան էին գալիս տարբեր հողուրագներ, բահեր, փոցխեր , շղթիկներ, արորներ ու դութաններ։ Բայց պատմությունն անողոք է, նա շտկում է բոլոր շեղումները։ Տեղական բնակիչները, եթե միայն դրանք եկողների համեմատ մեծամասնություն են կազմում, աստիճանաբար «հաղթում» են. եկողների գործիքներն իրենց տեղը զիջում են տեղականին։ Բայց, եթե տեղական հողակլիմայական պայմանները համընկնում են եկողների համապատասխան պայմաններին, այս դեպքում պատմությունը «ներում» է և տեղի է ունենում սպասելին՝ տեղական և ներմուծված գործիքների զուգակցումը։ Այս է, օրինակ, Արարատյան հովտի հողուրագների բազմազանության պատճառներից մեկը մանավանդ այն բանի հետևանքով, որ եկող տարրերը (պարսկահայեր և վասպուրականցիներ) բուն դաշտեցիների նկատմամբ բացարձակ մեծամասնություն են կազմել։

Այսպես պետք է բացատրել նաև օտար փոխառությունների հարցը։ Փոխառությունները տեղի են ունենում ոչ այնպիսի դեպքերում, երբ մի ժողովրդի կապը մյուսի հետ լոկ շփումով է արտահայտվում։ Փոխառության նախապայմանները դարձյալ երկու հարցի են պատասխանում. արդյոք փոխառվող գործիքը կարող է իր նոր հայրենիքում քննություն բռնել և եթե այդ գործիքը քննություն է բռնում, արդյոք կա՞ն այն սովորությունները, որոնք պիտի շարժման մեջ դնեն նրան։ Իսկ սովորությունը, այս պարագայում, նշանակում է գործիքը վերստին և ճշգրիտ կերպով վերարտադրելը, նրանով ճիշտ այնպիսի ձևերով աշխատելը, ինչպես հայրենիքում (խիստ կոացած, կիսակոացած, ուղիղ կանգնած, կողքանց), ճիշտ այն մշակելը, ինչ հայրենիքում և այլն։ Եթե այս հարցերն անպատասխան են մնում, ներմուծվող գործիքները դատապարտվում են մերժման, ընդ որում դրանք կարող են կարճ ժամանակ հետո ասպարեզից հեռանալ և բնավ չհիշվել կամ վերարտադրվելիս այն աստիճան կերպարանափոխվել ու հարմարվել նոր միջավայրին, որ դժվար լինի դրան դեֆորմացիա անուն տալ։ Այս պարագայում գործիքը մի տեսակ վերածնունդ է ապրում և իր ծնողի հետ ունեցած պատմական կապի համար պահանջվում է փաստական վկայություն։

Վերցնենք մեզ հայտնի փաստերից երկուսը։

1920-ական թթ. կեսերին Արտաշատի շրջանի կոլտնտեսությունները փորձի և գործիքների փոխանակման նպատակով ներմուծեցին Ուզբեկստանում հայտնի Ֆերմեն կոչված հողուրագը։ Սրա շեղբը մոտավորապես բահի թաթի չափ է՝ նույնքան քաշով։ Ուզբեկների համար հնուց հարազատ քեթմենը միայն մի երկու սեզոնում աշխատելուց հետո դարձավ արխիվային առարկա, որովհետև այն տղամարդու աշխատանքի գործիք է, իսկ Արարատյան հովտում աշխատանքը թեթև հողուրագներով կանայք են կատարում։ Մենք դրա բազմաթիվ օրինակները գտել ենք Արտաշատի կոլտնտեսությունների արխիվ-պահեստներում, սկսած 1940-ական թթ. մինչև 1950-ական թթ. վերջերը, որոնցից մի օրինակ պատմության թանգարան ենք տեղափոխել 1956-ին։

Քեթմենը շատ ուշ, 1957 թ. Ադրբեջանի վրայով մտավ նաև Մեղրի և 2—3 տարի հետո շրջանառությունից հանվեց։ Շվանիձորում բացատրեցին,

որ քեթմենը ծանր լինելու պատճառով առաջին իսկ տարում ենթարկվեց վերաշինման։ Դարբիններն այն վերահատելով հարմարեցրին Մեղրուն և նրա աշխատողներին։ Երկու կողմից կարածները կազմեցին քեթմենի $^2/_3$-ը։ Կոթառն ու միջնամատի $^1/_3$-ը նմանվեց սովորական երկարաթաթ հողուրագի (23×13 սմ), որը ևս տեղում չհարմարվելու հետևանքով չարմատացավ։ Այդ պատճառով էլ տեղական բրդեթոխրի բարակացրած ու երկարացրած նոր ենթաձևերը հողուրագի դեր են կատարում։

XIX դ. վերջերին կամ մեր դարի սկզբներին Ալեքսանդրապոլի բանջարանոցները մուտք գործեց գործարանային քլունդանման մի հողուրագ, որի մի շեղբը լայն էր և մյուսը՝ բիզ (տախ. IV—4)։ Չնայած այն հանգամանքին, որ Ալեքսանդրապոլում և նրա շրջակա մի քանի գետափնյա գյուղերում բանջարաբուծությունը աստիճանաբար լայն կիրառում էր գտնում, քուլունգ կոչված գործիքը հաջողություն չունեցավ։ Մենք այդ գործիքի մի օրինակը 1959-ին գտանք Առափի գյուղի հյուսն Բունյաթ Սարգսյանի դոմում, հին «էրկթմառունքի» մեջ թաղված ու մոռացված այն պարագայում, երբ այդ նույն կոլտնտեսականը բավական ընդարձակ բանջարանոց ուներ։

Սպասելի էր, որ Ալեքսանդրապոլի գարբինները կվերարտադրեին այս քուլունգը, մասնավորապես 1930-ական թթ., երբ մասսայական տարածում էր գտել ճակնդեղագործությունը։ Բայց այդ բանը տեղի չունեցավ, որովհետև քուլունգը պատրաստող գործարանը հաշվի չէր առել և չէր էլ կարող հաշվի առնել, թե Շիրակի բանջարաբույծներին ու ճակնդեղագործներին, հատկապես, ինչպիսի հողուրագներ են պիտանի։

Ավելին, Արարատյան հովտին հայտնի ճանկավոր հողուրագին (տախ. IV—3) նման մի ուրագ ևս մուտք գործեց Ռուսաստանից (IV—2)։ Շիրակում անհաջողության մատնվեց նաև այս քուլունգը այն պատճառով, որ հողակլիմայական պայմանները և սովորությունները չհամընկան։ Մենք 1950-ի ամռանը Լենինականի բնակիչ Ս. Ա. Քստրյանի տան նկուղի «էրկթմառունքի» մեջ մի շարք բրիչների թվում գտանք և տեղը գավառագիտական թանգարանին տրամադրեցինք (№ 123) մի հին հողուրագ։ Սա ունի քլունդի ձև, տափակ է և կենտրոնում բացվում է կոթառը (IV—1)։ Հարցումներից պարզվեց, որ դրա նմանն ունեցել են նաև Ջաջուռ և Կամո գյուղերը, բայց այժմ չքացել է։ Մեր համոզումն այն է, թե այս հողուրագը տեղերում վերարտադրվել է անցյալ դարի վերջերին՝ IV տախտակի 2-րդ նկարում ներկայացված ուրագ-քլունգի օրինակով։ Այդ վերարտադրությամբ գործարանային ուրագի ձևը բավական աղավաղվելուց զատ սա ևս քննություն չի բռնում և հիշվում է միայն զառամյալ ծերունիների կողմից։

Բայց այս գործիքների չքացումը բնավ կապված չէր գրաղմունքի գոյության հետ, որովհետև այն առավել զարգացման հասավ հենց այդ գործիքների մուտք գործած ժամանակներում։

Կարելի է այսպիսի այլ օրինակներ էլ բերել, թեև սա էլ բավական է համոզվելու համար, որ օտար գործիքը կմերժվի, եթե նրա արտադրությունը կատարվել է առանց տեղական պայմանները հաշվի առնելու։

Բայց, եթե տվյալ աշխատամիջոցը նախապես ծանոթ է եղել այս կամ այն միջավայրին և գործածությունից դուրս է ընկել պատմական այլ պատճառների հետևանքով, այդ գործիքը իսկույն տեղայնացվում, «աղգայնաց-

վում» և տարածում է գտնում։ Այդպիսին է, օրինակ՝ գործարանային երկբերան բլունգը, որի նմանը, Հայաստանն ունեցել է դեռևս ուրարտացիներից էլ առաջ։

* * *

Վերևում ասացինք, թե բրիչներն առհասարակ, ըստ գործելակերպի, կարելի է բաժանել երեք հիմնական տեսակների. 1. այն բոլոր բրիչները, որոնք ձող լինելուց չեն դադարել և գործածվում են ձեռքի, որովայնի ու կրծքի ճնշմամբ, անվանում ենք ձեռքի ճնշմամբ աշխատող գործիքներ։ 2. Հարվածային գործիքներ ենք անվանում այն արտադրամիջոցները, որոնք ձեռքերով հարվածելով են գործում։ 3. Այն բրիչները, որոնց հարմարանքները թույլ են տալիս ոտքով հարվածելու կամ ոտքով ճնշելով գործել, անվանում ենք ոտնահարվածով աշխատող գործիքներ։

Բրիչների այսօրինակ դասակարգումը լայն հնարավորություններ է ընձեռում տեսնելու համար դրանց յուրաքանչյուրի ներքին կապը մյուսների հետ, փոխադարձ կախումները, ելման կետերը և այլն, որով դյուրին է բացահայտել զարգացման ընթացքը, ձևերի ու ֆունկցիաների անցումները՝ էվոլյուցիան։ Ըստ այդմ փայտաձող բրիչներն ամենանախնականն են, որոնց զարգացումը հանգեցնում է հարվածային գործիքների՝ փայտե, ոսկրե, քարե և մետաղե մուրճերի ու կացինների առաջացմանը։

Հողուրագները, որ հարվածային գործիքներ են, վկայվում են միայն բրոնզի շրջանից սկսած։ Ասել է, թե դրանք քարե և մետաղե հին մուրճերի ու բլունգների զարգացումն են հանդիսանում։

Բրոնզե բահը վկայված է ասորական սեպագիր արձանագրություններում։ Իսկ Ուրարտուում և Հայաստանում տակավին չեն հայտնաբերված։ Հնարավոր համարելով բրոնզի բահի գոյությունը Ուրարտուում կամ նրանից առաջ, նկատենք, որ այն կարող էր ծագել հողուրագներից, քանզի հողուրագների մեծ մասը ոչ այլ ինչ է, քան հարվածով փորող բահ։ Այսօր էլ այդպես են, օրինակ, Մեղրու Բրդրթոխր կոչված գործիքները, որոնք սրածայր բահի տեսք ունեն և բլունգի ու հողուրագի լիակատար սինթեզն են ներկայացնում։

В. А. Бдоян

АРМЯНСКИЕ ТЕСЛОВИДНЫЕ МОТЫГИ

Резюме

Армения до появления сохи и плуга и на ряду с ними имела развитое мотыжное земледелие. Данные археологии свидетельствуют о том, что в Армении с глубокой древности применялись деревянные, костянные, каменные и металлические мотыги разнообразных форм. Большая их часть в пережиточном виде бытовала до начала XX века. Среди них важную роль играют тесловидные мотыги, которые имеют определенное сходство с таковыми из Закавказья и стран Передней Азии.

Материалы раскопок Армении дали незначительное количество металлических тесловидных мотыг (см. табл. I). Однако этнографиче-

ский материал XIX и начала XX вв. свидетельствует о широкой разновидности указанных мотыг. Последние по своей конструкции делятся на четыре типа. Мотыги первого типа похожи на современные столярные тесла, отличаясь большим размером (табл. II). Втулка мотыг второго типа согнута на 90 градусов (табл III. рис. 4—8). Мотыги третьего типа черенковые (табл. III. рис. 5). Мотыги четвертого типа двулезвийные, причем одна сторона нормальная мотыга, вторая образует вильчатую форму, для прополки грядок (табл. IV).

Основная масса тесловидных мотыг в древности имела определенный ареал распространения, однако в современной Армении они иногда встречаются в смешанном виде. Подобный факт объясняется массовым переселением в Советскую Армению жителей различных районов Зап. Армении в 1915—1920 гг.